

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ
ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Դ. Դումանյան	ՀՀ առողջապահության նախարար
Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Ա. Երիցյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Մ. Բադալյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
Ա. Դավթյան	ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Թունյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ
Կ. Գալստյան	Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի տնօրեն
Մ. Հակոբյան	Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ

Լ. Յագուրյան	<<Սպառողների իրավունքների պաշտպանություն>> հասարակական կազմակերպության նախագահ
Ր. Մխչյան	Հայաստանի արտահանողների ասոցիացիայի նախագահ

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ա. Կարապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ս. Մնացականյան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Լ. Միրզոյան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալ
Վ. Կոխկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ս. Հայրապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության պետ
Մ. Հովհաննիսյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության պետի տեղակալ
Վ. Սարոյան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության իրավաբանական բաժնի պետ
Ա.Ոսկանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի իրավաբանական վարչության պետ
Ն. Բաղասյան	ՀՀ ԷՆ տեսչական բարեփոխումների խմբի անդամ

Հ. Հակոբյան	ՀՀ ԷՆ տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Վ. Դաբադյան	ՀՀ ԷՆ տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Մ. Ղազարյան	ՀՀ ԷՆ տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Ս. Ասիլյան	ՀՀ ԷՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ
Ա. Նազարյան	ՄՖԿ ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ղեկավար
Ա. Գոմկցյան	ՄՖԿ երևանյան գրասենյակի փորձագետ
Հ. Քաղկեցյան	ՄՖԿ երևանյան գրասենյակի փորձագետ
Գ. Պողոսյան	ՎՋԵԲ գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Ս. Ծատուրյան	ՎՋԵԲ գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ստոյիտորական գործունեության հսկողության տեսչության և ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանն ու ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Վ. Դաբադյան, Կ. Մինասյան, Մ. Հովհաննիսյան, Կ. Արեյան, Վ. Գաբրիելյան, Ա. Աշոտյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հետաձգել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանն ու ստուգաթերթերի ընդունման վերաբերյալ հարցի քննարկումը և դրան անդրադառնալ հաջորդ նիստին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվելիք առաջարկությունների ներքո.

2) հանձնարարել՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ ուսումնասիրել քաղաքաշինական ոլորտում ռիսկի վրա հիմնված ստուգումների միջազգային լավագույն փորձը և ըստ այդմ առաջիկա տեսչական բարեփոխումների խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել համապատասխան առաջարկություն.

3) հավանություն տալ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը և ստուգաթերթին.

4) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ.Գաբրիելյանին՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթի նախագծերի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

5) հավանություն տալ նիստում հնչեցված դիտողություններին և առաջարկություններին համապատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանն ու ստուգաթերթերի լրամշակված տարբերակին.

6) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝

ա. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության հետ համատեղ նիստում հնչեցված դիտողություններին և առաջարկություններին համապատասխան լրամշակել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանն ու ստուգաթերթերի նախագիծը.

բ. վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ռիսկի վրա հիմնված ստուգումների վեց ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Վ. Դաբադյան, Ռ. Մխչյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ռիսկի վրա հիմնված ստուգումների վեց ստուգաթերթերին.

2) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Ա. Բախչազույանին՝

ա. ռիսկի վրա հիմնված ստուգումների վեց ստուգաթերթերի նախագծերի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

բ. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության հետ համատեղ փորձարկել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ռիսկի վրա հիմնված ստուգումների նյութ ստուգաթերթերը և վերջնական տարբերակը ներկայացնել Տեսչական բարեփոխումների խորհրդի քննարկմանը.

3) առաջարկել Հայաստանի արտահանողների ասոցիացիայի նախագահ Բ. Մխչյանին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գործառնությունների վերաբերյալ հարցադրումները գրավոր ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունն ու ստուգաթերթերին հավանություն տալու վերաբերյալ

(Ն. Բաղասյան, Հ. Թովմասյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի առաջարկությանը համապատասխան միջազգային փորձագետների հետ լրացուցիչ քննարկման նպատակով հետաձգել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության քննարկումը.

2) հավանություն տալ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների ծխախոտի, խաղալիքների, մակերևութաակտիվ միջոցներ և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների ստուգաթերթերին.

3) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ.Դավթյանին՝

ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը քննարկել միջազգային փորձագետների հետ և եռամսյա ժամկետում մեթոդաբանության վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել տեսչական բարեփոխումների խորհրդի քննարկմանը.

բ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների ծխախոտի, խաղալիքների, մակերևութաակտիվ միջոցներ և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող մի-

ջոցների ստուգաթերթերի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

գ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների նյութ ստուգաթերթերը փորձարկել և ներկայացնել Տեսչական բարեփոխումների խորհրդի քննարկմանը.

4) հավանություն տալ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանն ու ստուգաթերթերին.

5) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին՝

ա. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

բ. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության հետ համատեղ փորձարկել ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը և վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

4. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության 30 ստուգաթերթերին հավանություն տալու ու ստուգումների տարեկան ծրագրի հետ կապված գործնական որոշակի խնդիրների վերաբերյալ

(Ն. Բաղասյան, Կ. Արեյան, Դ. Դումանյան, Տ. Սարգսյան)

4. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության 30 ստուգաթերթերին.

2) հանձնարարել ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանին՝

ա. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության 30 ստուգաթերթերի նախագծերի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

բ. Տեսչական բարեփոխումների խորհրդի քարտուղարության հետ համատեղ փորձարկել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների նյութ ստուգաթերթերը և վերջնական տարբերակը ներկայացնել Տեսչական բարեփոխումների խորհրդի քննարկմանը:

5. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման հետ կապված խնդիրների վերաբերյալ

(Ն. Բաղասյան, Ս. Մնացականյան, Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

4. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն, որ <<ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը ստուգումներն կիրականացնի ցածր ռիսկայնություն ունեցող սուբյեկտների համար նախատեսված՝ ոչ ավելի քան 5 տարին մեկ անգամ, հաճախականությամբ:

6. Տեսչական բարեփոխումների շրջանակներում իրականացված միջոցառումների վերաբերյալ

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել տեղեկատվություն տեսչական բարեփոխումների ընթացքի վերաբերյալ.

2) ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի պետական տեսչության համար մինչև 70 մլն դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգման կասեցման արգելքը վերացնելու առաջարկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ